

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական կոմիսար,
Խորհրդային Միության մարշալ ընկ. Կ. Յե. վարո-
շկովի գեկուցումը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վոչ-
հերքական Չորրորդ սեսիայում 1939 թ. ոգոստո-
սի 31-ին

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ ● 1939

355

4-86

ՊՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈՂԱՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑՆՔ

355
վ-ՋԵ. 46

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ պաշտպանության ժողովրդական
կոմիսար, Խորհրդային Միության մաքշալ
բնկեր Կ. Յե. Վորոշիլովի զեկուցումը
ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վոչ-հեքթական
Զորքորդ Սենիայում 1939 թ. ոգոստոսի 31-ին


0224
22

12 AUG 2013

40.534

ПРОЕКТЕ ЗАКОНА О ВСЕОБЩЕЙ
ВОИНСКОЙ ОБЯЗАННОСТИ

Доклад народного комиссара обороны
СССР маршала Советского Союза
тов. К. Е. Ворошилова
Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939



4360
39

Հայերեն թարգմանության խմբագիր Անդ. Գազարյան
Տեխն. խմբագիր Ա. Խաչատրյան
Սրբազրիչ Վ. Զիդեջյան
Կոնտրոլ սրբազրիչ Լ. Արսվյան

Գլավլիտի լիազոր № 4—2471, հրատ. 731
Պատվեր № 183, տիրաժ 10.000
Թղթի չափսը 82×105¹/₃₂ (51.200 տպ. նիշ 1 տպ. մամուլում)
1 տպ. մամուլ, 1/2 թերթ թուղթ.
Հանձնվել է արտադրության 8 IX 1939 թ.
Ստորագրվել է տպագրելու 16 IX 1939 թ.
Գինը 15 կ.

Փետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65

Գերազույն ինքնազի ընկեր գեպուտատներ.

ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների ինք-
նուրդը ձեր քննարկմանն է ներկայացրել «Բնդհանուր
զինվորական պարտականության մասին» որենք-նախա-
զիծը: Այդ որենքի կենսական անհրաժեշտությունը
թերազրիած է ամենից առաջ մեր Ստալինյան Մահա-
նադրության կողմից, մյուրի գրույթների հետ ներկա-
յումս գոյություն ունեցող որենքը մերոչ հակասու-
թյան մեջ է:

Ստալինյան Մահանադրության 132-րդ հոդվածն
առում է.

«Ընդհանուր զինվորական պարտականություն
որենք է հանգիսանում» և ապա.

«Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյու-
ղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ-ի քաղա-
քացիների պատվավոր պարտականությունն է»:
Մինչդեռ գործող որենքի առաջին հոդվածը խըմ-
բազրիած է այսպես.

«... ԽՍՀ Միության պաշտպանությունը գեն-
քը ձեռքին իրականացնում են միայն աշխատա-
վորները: Վոչ-աշխատավորական տարրերի վրա
զրվում է ԽՍՀ Միության պաշտպանությանը
սպասարկելու ուղղությամբ այլ պարտականու-
թյունների կատարումը»:

Բացի դրանից, նոր որենք հրատարակելու անհրա-

Ժեշտութեանը բոլորում է նաև այն փոփոխութեան-
ներեց, վորոնք վերջին ժամանակներս կատարվել են
մեր ժողովրդի ու պետութեան զարգացման մեջ:

«Պարտադիր զինվորական ծառայութեան մասին»
որենքն ընդունվել էր Կենտրոնական և Ժողովրդային
կողմից 1930 թվի օգոստոսի 13-ին, այսինքն՝ ուղիղ
9 տարի սրանից առաջ:

Այդ ժամանակվա ընթացքում խորհրդային Ժողո-
վուրդը, Լենինի—Ստալինի կուսակցութեան ղեկավա-
րութեամբ, մեծագույն հաջողութեաններ է ձեռք բերել
աշխատավորների պետութեան կազմակերպման ու ամ-
րասնդման և խորհրդային Միութեան մեջ սոցիալիզմ
կատուցելու գործում:

Շահագործող դասակարգերը մեր յերկրում այժմ
վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկված,
և բանվորները, կոլտնտեսականներն ու խորհրդային
ինտելիգենցիան անխղճ լիորեն համախմբվել, միասնա-
կան, ընդհանուր աշխատանքային ճակատ են կազմել:

Մեր յերկրը սոցիալիզմ կառուցող յերկրից վե-
րածվել է հաղթանակած սոցիալիզմի յերկրի: Սոցիա-
լիզմի հաղթանակները հնարավոր դարձրին խորհրդային
բաղաբացիների լիակատար իրավահավասարութեանը,
վորն ամբասնդված է Մտալինյան Սահմանադրու-
թեամբ: Այս ամենը և շատ ուրիշ բաներ խիտ կեր-
պով փոխել են այն սոցիալ-բաղաբական հիմքը, վորի
վրա իննը տարի սրանից առաջ կառուցվել էր ներկա-
յումս գործող «Պարտադիր զինվորական ծառայու-
թյան մասին»:

Այդ ժամանակվա ընթացքում արմատական փո-
փոխութեաններ են կատարվել նաև մեր պետութեան
գլխավոր ուժերի բուն շինարարութեան, կազմակերպ-

ման ու կոմպլեկտավորման մեջ: Բախկան է մատ-
նանշել, վոր խաղաղ ժամանակվա Բանակի և Ռազ-
մա-Մովային Նավատորմի թվական կազմը վերջին իննը
տարվա ընթացքում աճել է ավելի քան 3,5 անգամ:

Հարևանցիորեն տեղին եմ համարում նշել, վոր
կարմիր Բանակի և Ռազմա-Մովային Նավատորմի
թվական աճը լիովին համապատասխանում է միջադ-
գային այն իրադրութեանը, վորը մեր կառավարու-
թեանը, կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն և
ընկեր Ստալինը միշտ ուշադիր ու հանգամանորեն
ուսումնասիրում են, հաշվի առնելով նրա բոլոր
առանձնահատկութեաններն ու զիջողաբանությունը:
(Բուռն, յերկարատև ծափահարութեամբ): Բոլորը վոտֆի
յեն կանգնում):

Մեր պետութեանը, ընկերներ, հատուկ տիպի յե
և միակն է աշխարհում: Այն շրջապատված է կապի-
տալիստական աշխարհի մեկ թշնամի պետութեաննե-
րով: Ուստի սոցիալիզմի յերկրի պաշտպանութեանը
կարող է հույս դնել միայն իր սեփական ուժերի և
ուսուրանների վրա: Հասկանալի յե, վոր մեր կու-
սակցութեան հանճարի և մեր յերկրի ղեկակալի—մեր
Ստալինի խորաթափանցութեանը սոյլից դումարելի
յե հանդիսանում մեր հայրենիքի պաշտպանութեան
ուղղութեամբ կիրառվող ձեռնարկումների նումարի
մեջ: (Բուռն, յերկարատև ծափահարութեամբ): Բո-
լորը վոտֆի յեն կանգնում):

Բանակի և Նավատորմի թվական աճմանը զուգըն-
թաց՝ աճել ու զարգացել են նաև այն ուղղման
տեխնիկան ու սպառազինումը, վորոնցով հաղեցված
են մեր զինված ուժերը: Այդ մասին դուք բոլորը,
ընկեր ղեկավարներ, լավ իրազեկ եք դարձված, և

յես ինձ թույլ կտամ միայն մի քանի թվական տեղեկանքներով հիշեցնել այդ մասին:

Համեմատելով կարմիր Բանակի և Ռազմա-Մտ-վային Նախատորմի մարտական տեխնիկայի առաջադիմությունն իննը տարվա ընթացքում, ստանում ենք հետևյալ պատկերը: Եթե 1930 թիվը վերցնենք իրեն 100%, ապա մենք ստանում ենք հետևյալը.

Տանկեր՝ 1930 թվին յեղել է 100%, այժմ յես նույնիսկ անհարմար եմ զգում հիշատակել թիվը, ուստի յես փոքր տեղանքը կհիշեմ, այլ կտամ, թե քանի անգամ է աճում կատարվել, — մենք տանկեր ունենք 43 անգամ ավելի: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Դաիլինից բացական յուրուներ «կեցցե՛ր Լենինի—Ստալինի կուսակցությունը: «Ուսում, ընկերներ»): Բուռն ծափահարություններ):

Ինքնաթիռներ 1930 թվին՝ 100%, այժմ 656%, այսինքն՝ աճում 6,5 անգամ:

Մանր, միջին ու թեթև հրետանի՝ 1930 թվին յեղել է 100%, այժմ՝ 692%, կամ համարյա 7 անգամ ավելի:

Փոքր կալիբրանոց հակատանկային ու տանկային հրետանի 1930 թվին 100%—ի փոխարեն այժմ մենք ունենք 70 անգամ ավելի: (Ծափահարություններ):

Ձեռքի և հաստոցավոր զնդացիրներ 1930 թվին 100%—ի փոխարեն այժմ մենք ունենք 539%, կամ համարյա 5,5 անգամ ավելի:

Յուրաքանչյուր մարտիկին ընկնող մեխանիկական ձիու ուժ 1930 թվին, այն ժամանակվա թվական կազմի համեմատությամբ, մենք ունեցել ենք 3,07: Ներկայումս, յերբ թվական կազմը, ինչպես յես արդեն ստացի, աճել է ավելի քան 3,5 անգամ, մենք ունենք

յուրաքանչյուր մարտիկին ընկնող լրիվ 13 ձիու ուժ: (Ծափահարություններ):

Ռազմա-Մտվային Նախատորմի տոննաժը 1930 թվին 100%—ից ներկայումս աճել է 130%, այսինքն՝ մենք այժմ ունենք 230%:

Կարմիր Բանակի և Նախատորմի թվական կազմի, սպրտազինման և ռազմական տեխնիկայի աճումն արմատապես փոխեց մեր պաշտպանությունն ներքին սարուկառուցման և կազմակերպական կառուցվածքը: Դրան համարատասխան՝ մեծ փոփոխություններ են կատարվել զորքի զանազան տեսակների և առանձին ռազմական մասնագիտությունների հարարերակցություն մեջ: Յերեսն են յեղել մեծ թվով նոր զինվորական օրգանիզմներ ու զորական միավորումներ և, հետևապես, նաև նոր մասնագետներ: Բանակում և Նախատորմում թվական տեսակետից, քաղաքականապես և իր մասնագիտական վորակավորմամբ ուժեղ կերպով աճել է պետկազմը, մեր պաշտպանությունն այդ մշտական ու ամենաարժեքավոր կապիտալը: Միաժամանակ բարդացել են շարքային և մանավանդ, պետկազմի ծառայությունն պայմանները:

Մեր Բանակը և Նախատորմը, վորոնք հազեցած են մարտական ամենարարդ տեխնիկայով և ամեն տեսակ մեքենաներով ու մեխանիզմներով, այժմ, ավելի քան անցյալում, պահանջում են հսկայական քանակություն շարքային ու պետկազմի բարձրորակ մասնագետներ: Հատկապես՝ պետկազմի:

Թվարկված բոլոր պայմանները, ինչպես և շատ այլ պայմաններ, «Պարտադիր զինվորական ծառայություն» գործող օրենքը, իհարկե, չեր կարող հաջիտանել, ուստի և այն յենթակա յես նոր օրենքով փո-

խարխուլելու: Սահայն, յես կարծում եմ, մենք չենք
զանդատվի, վոր խորհրդային կյանքը, մեր պետու-
թյան և նրա գինված ուժերի բուռն զարգացումն առաջ
են անցել գործող որենքից, մանավանդ, վոր կարմիր
Բանակն ու Ռազմա-Մովային Նավատորմը լիովին ար-
տացուիլ են մեր հայրենիքի մեծ նվաճումները: Մեր
պետութայն պաշտպանական ձեռնարկումների մեջ, սո-
ցիալիզմի գինված ուժերի կառուցման մեջ, ինչպես
հայելու մեջ, արտացույցված է հզոր խորհրդային ժողո-
վրդի հաղթական յերթը Լենինի—Ստալինի կուսակ-
ցության ղեկավարութայմբ, մեծ Ստալինի իմաստուն
առաջնորդութայմբ: (Բուռն, յերկարատև ծափախա-
րություններ: Բացականչություններ՝ «Կեցցե՛ր ընկեր
Ստալինը, ուռա՛»):

Այս իննը տարվա ընթացքում տարբեր ժամանակ-
ներում ընդունված են յեղել պաշտպանութայնը վերա-
բերող առանձին շատ որենքներ ու վորոշումներ, վո-
րոնք անհրաժեշտ են ավելի սերտորեն կապակցել հիմ-
նական գինվորական որենքի հետ:

Այսպես, որինակ.

Այդ ժամանակվա ընթացքում գինվորական կոչում-
ներ մտցվեցին Բանակի, Ռազմա-Մովային Նավատոր-
մի, սահմանապահ ու ներքին զորքերի ամբողջ պետ-
կագմի համար: Այս միջոցառումն ուժեղ չափով նպաս-
տեց Բանակի պետկագմի կազրերի ամբողջմանն ու
կազմակերպմանը, այն վորոչեց մեր հրամանատարա-
կան կազմի ղեմքը, նպաստեց պետկագմի կողմից ծա-
ռայությունն անցնելու և ծառայութայն կարգով առաջ
քաշվելու գործի բարելավմանը:

Զինվորական գործը սովորած կոնտինգենտների ընդ-
հանուր թիվն ավելացնելու նպատակով, 1936 թիվին,

Կենտրոնի վորոշմամբ, իսկական գինվորական ծա-
ռայութայն գորակոչային հասակն իջեցվեց յերկու տա-
րով, այսինքն՝ 21-ից 19 տարեկան:

Կարմիր Բանակի կառուցման, կոմպլեկտավորում-
ների և այդ հիման վրա շարքային ու պետկագմի կող-
մից ուղղական ուսուցումն անցնելու այսպես կոչված՝
տերիտորիալ սիստեմը լիովին լիկվիդացիայի յես յեն-
թարկված: Մեր ամբողջ բանակն այժմ կառուցվում,
ուսուցանվում և դաստիարակվում է կադրային հի-
մունքներով:

Սրանից մեկ տարի առաջ կատարվեց գինվորական
վարչութայն տեղական որդանների արմատական վերա-
կառուցում, վորոնք մինչ այդ կազմակերպորեն սեր-
տորեն միահյուսվում էյին Բանակի տերիտորիալ սիս-
տեմի հետ:

Ներկայումս ստեղծված են ինքնուրույն գինվորատ-
ներ՝ ավտոնոմ հանրապետություններում, յերկրամա-
սերում ու մարզերում, ավտոնոմ մարզերում ու քա-
ղաքներում:

Շրջանային գինվորական կոմիտարիատների ցանցն
ընդարձակված է ավելի քան յերեք անգամ, վորն զգա-
լիորեն բարելավեց գինատարտների հաշվառման, ինչ-
պես նաև հերթական դորակոչի սիստեմը և լիովին ա-
պահովում է գորակոչն ըստ մորիլիզացիայի:

Ընդունված է գինատարտների հաշվառման նոր
սիստեմ:

Հաշվառման նոր կարգը կապված է քաղաքներում՝
անձնադրային սիստեմի հետ, դյուղական վայրերում՝
ծխամատյանների հետ:

Ամբողջ գինվորական ստորին հաշվառումը գրված
է քաղաքներում՝ ԲԳ միլիցիայի բաժանմունքների

վրա, գյուղական վայրերում՝ գյուղական և ավանային խորհուրդների վրա:

Ուսանողների այսպես կոչված՝ բարձրագույն արտագորային պատրաստութունը, վորը գոյութուն ուներ առաջ և վորի միջոցով մենք պատրաստում եյինք պահեստի պետկազմ, վորպես իրեն վոչ լրիվ չափով արդարացնող, — վերացված է:

Ավելացված են Ռազմա-Մովային Նավատորմում ծառայության ժամկետները, վորոնք այժմ ամբողջապես մտել են նոր որինազծի մեջ:

Ընկե՛ր գեպուտատներ.

Ձեր քննարկմանն առաջարկված որինազիծը, սերտորեն կապված լինելով մեր Ստալինյան Սահմանադրության հետ, նաև հաշի՛ր յե առնում Բանակի և Նավատորմի կյանքում կատարված այն բոլոր փոփոխութունները, վորոնց մասին յես այստեղ զեկուցեցի:

Թույլ տվեք ինձ համառոտակի կանգ առնել նոք որինազծի հիմնական ու սկզբունքային հարցերի վրա:

ՈՐԵՆՔԻ ԱՆՈՒՆԸ: Առաջարկվում է ներկայումս գործող «Պարտադիր զինվորական ծառայության մասին» որենքի փոխարեն՝ նոր որենքը, մեր Սահմանադրությանը համապատասխան, անվանել «Ընդհանուր զինվորական պարտականության որենք»:

ԻՍՎԵՍՆ ԵՎ ՄԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Որինազիծը նախատեսում է իսկական ծառայության ժամկետը ցամաքային զորքերի և Ռազմա-Ուղային Ուժերի զորամասերի կրտսեր հրամանատարների համար ավելացնել 2-ից մինչև 3 տարվա: Նույն այդ 3 տարի ժամկետը նախատեսվում է Ռազմա-Ուղային Ուժերի զորամասերի ամբողջ շարքային կազմի, ներքին զորքերի կրտսեր հրամանատարների համար և ցամա-

քային սահմանապահ զորքերի շարքայինների ու կրտսեր հրամանատարների համար: Սահմանապահ զորքերի նավերի վրա ծառայության ժամկետ սահմանվում է 4 տարի:

Յես կարծում եմ, վոր առանձնապես հարկ չկա պայացուցել զինվորական ծառայողների հիշյալ կատեգորիաների իսկական զինվորական ծառայության ժամկետներն ավելացնելու ծայրահեղ անհրաժեշտութունը: Ժամանակակից բանակն իրենից ներկայացնում է, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, չափազանց բարդ, ամեն տեսակի ու բարդ մեխանիզմներով և սպառազինմամբ խիստ հազեցած մի կոմբինատ: Վոչ միայն անզբաղեւտ, այլ նույնիսկ լավ դրագետ մարդը, վորը չի անցել սխտեմատիկ, հիմնավոր ու յերկարատև ուսուցում, այժմ չի կներող եֆեկտիվ կերպով կատարել նույնիսկ հասարակ մարտիկի Ֆունկցիաները հատուկ զորամասերում. որինակ՝ կապավորի Ֆունկցիաները, ել չենք խոսում կրտսեր պետկազմի մասին, վորը զինված ուժերի հիմքն է հանդիսանում:

Ահա թե ինչու յե առաջարկվում ավելացիայի մեջ և սահմանապահ զորամասերում ավելացնել շարքային կազմի ծառայության ժամկետները:

Ըստ ներկայումս գործող որենքի, կարմիր Բանակի կրտսեր հրամանատարները ծառայում են շարքային կարմիր-բանակայիններին համահավասար՝ 2 տարի:

Յերկամյա ժամկետը կրտսեր հրամանատար պատրաստելու և նորմալ ոգտադործելու համար միանդամայն անբավարար է: Կրտսեր հրամանատարների պատրաստումը ծառայության առաջին տարվա ընթացքում կատարվում է գնդային դպրոցներում և միայն ծառայության յերկրորդ տարվանից են կրտսեր հրա-

մանատարներն սկսում ղեկավարել ստորաբաժանումները: Այսպիսով, նրանց հրամանատարական ծառայության ժամկետը ներկայումս փաստորեն հաշվվում է մեկ տարի: Այսպիսի ժամկետը հրամանատարական ունակութուններ ձեռք բերելու և ամրապնդելու համար, ել չենք խոսում նորմալ ոգտազործման մասին, շատ քիչ է:

Կրտսեր հրամանատարների անընդհարա պրակտիկ փորձը և ծառայության կարճ ժամկետը չափազանց բացասաբար են անդրադառնում մարտիկների պատրաստության վրա, վորի հետևանքով հարկ է լինում բանակում պահել ղերակետիկ ծառայության մեջ դանդաղ մեծ թվով կրտսեր հրամանատարներ:

Բանակի կրտսեր հրամանատարների և Ռազմա-Ուժային Ուժերի կրտսեր մասնագետների ծառայության ժամկետի ալեյացումը մինչև 3 տարվա՝ մեզ հնարավորութուն կտա հրաժարվել ղերակետիկների ինստիտուտից, բացառությամբ այն վո՛չ մեծաթիվ ղերակետիկների, վորոնք անհրաժեշտ կլինեն վաշտերի, մարտկոցների, եսկադրոնների ավազների պաշտոնների համար, և վորոչ մասնագետների: Բացի դրանից, մինիմումի հասցվելու չափ կրճատելով ղերակետիկ կրտսեր հրամանատարների թիվը, մենք հնարավորութուն կունենանք արադացնելու լավ պատրաստված կրտսեր հրամանատարների պահեստի կուտակման տեմպը, վորոնք կարժիր Բանակին հարկավոր են մեծ թվով:

Կրտսեր հրամանատարներն սուպա պատերազմի մեջ կխաղան ամենատաղնակարգ և կարևորագույն դեր:

ՉՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀՍՍԱԿԻ ՄԱՍԻՆ: Ըստ գործող որենքի, իսկական ծառայության կանչվում են այն

քաղաքացիները, վորոնց 19 տարին լրացել է մինչև զորակոչի թվականի հունվարի 1-ը:

Վորովհետև զորակոչն սկսվում է սեպտեմբերի 1-ից, ապա փաստորեն զորակոչի ներկայանում են 19 տարեկան և 8 ամսականից մինչև 20 տարեկան և 8 ամսական յերիտասարդները:

Ըստ որինագծի (հոդ. 14) զորակոչային հասակը սահմանվում է 19 տարեկանից, իսկ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածներին համար՝ 18 տարեկանից: Ըստ վորում, հասակը հաշվվում է վոչ թե առ 1-ն հունվարի զորակոչի տարվա, ինչպես այժմ է, այլ այն ամբողջ տարվա ընթացքում, յերբ զորակոչայինը կանչվում է բանակ, այսինքն՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Այսպիսով, յերիտասարդութունը իսկական գինվորական ծառայության փաստորեն կընդունվի հետևյալ հասակում՝ լրիվ միջնակարգ դպրոց չավարտածները՝ 18 տարեկան և 8 ամսականից մինչև 19 տարեկան և 8 ամսականը, իսկ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածները 17 տարեկան և 8 ամսականից մինչև 18 տարեկան և 8 ամսականը: Հետևապես, զորակոչային հասակն իջեցվում է մեկ տարով, իսկ լրիվ միջնակարգ կրթություն ունեցող անձերի համար՝ յերկու տարով:

Նշանակում է, Բանակը և Ռազմա-Մտվային Նավատորմն այս տարվանից, յեթե նոր որևնքն ընդունվի, կկոմպլեկտավորվեն միջին հաշվով 19 և 18 տարեկան հասակի յերիտասարդներից:

Դրա՛ տևանքով, մենք ստանում ենք յերիտասարդությա՛ լրացուցիչ տարեկան կոնտինդենտ՝ մեր պահեստի կադրերն ուժեղացնելու համար, վորը մեր ժամանակում չափազանց կարևոր է: Պատերազմը, յե-

Թե մեզ վիճակված է այն ճաշակել, կպահանջի մեծ քանակութեամբ մարտիկներ և հրամանատարական կազմ: Մենք գիտենք, վոր պատերազմը կլինի դաժան, բայց գիտենք նաև, վոր այն մեզ համար կլինի անպայմանորեն հաղթական: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարութեամբ):

Հասկանալի չէ վոր, ընկե՛ր դեպուտատներ, դրա համար հարկավոր է անդուլ կերպով, անընդհատ և հմտորեն սրտորաստովել: Այդ պայմաններում մենք մեր սոցիալիստական հայրենիքը, Մեծ Խորհրդային Ժողովրդի պատիվն ու արժանապատվութեանը հաղթականորեն կպաշտպանենք բոլոր ու ամեն տեսակ թշնամիներից: Դրա համար անհրաժեշտ է խաղաղ ժամանակ շատ և լավ պատրաստել զինվորական ծառայողների ու զինապարտների համապատասխան կոնսերվանտներ:

Մեր յերկերը, նրա բոլոր քաղաքացիները պետք է միշտ լինեն կազմ ու պատրաստ: Խորհրդային մարդիկ, վորոնք ուժեղ են վողով, պարտավոր են լինել Ֆիզիկապես ամուր և զինվորական գործն խմայող:

ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Որենքի նախադժի մեջ զգալի տեղ է հատկացված զորակոչային հանձնաժողովների գործունեութեան կարգավորմանը: Ըստ գործող որենքի՝ զորակոչային հանձնաժողովների կազմի մեջ, բացի զինվորական կոմիսարից և գործկոմիների ներկայացուցիչներից, մտնում են նաև պրոֆմիութենական կազմակերպութեանները, Ժողովրդական կրթութեան բաժինների ներկայացուցիչները, իսկ առանձին դեպքերում նաև հասարակական կազմակերպութեանների ներկայացուցիչները:

Ըստ որինադժի՝ զորակոչային հանձնաժողովները գործում են տեղական զինվորական կոմիսարի նախա-

զա՛նութեամբ և կազմված են պետական իշխանութեան տեղական որդանների ներկայացուցիչներից, Ռազմա-Մովային Նավատորմի, ՆԳՄԿ, միլիցիայի ներկայացուցիչներից ու յերկու բժիշկներից:

Զորակոչն անցկացնելու պարտականութեանը դըրվում է տեղական զինվորական ու քաղաքացիական իշխանութեանների վրա: Ուստի զորակոչային հանձնաժողովների կազմի մեջ պրոֆմիութեանների, Ժողովրդական կրթութեան բաժինների և հասարակական կազմակերպութեանների ներկայացուցիչներ մտցնելը, իմ կարծիքով, վորևէ անհրաժեշտութեան չի ներկայացնում:

Զորակոչային հանձնաժողովների աշխատանքի մեջ հատուկ տեղ են դրավում բժիշկները: Բանակն ու Նավատորմն առողջ կոնսերվանտով կոմպլեկտավորելն զգալի չափով կախված է զորակոչի ժամանակ բժիշկների աշխատանքից: Մյուս կողմից, հիվանդութեան պատճառով զորակոչից առանց բավականաչափ հիմքերի ազատելը կարող է նույնպես վնաս հասցնել պետութեան պաշտպանութեանը: Ուստի անհրաժեշտ է համարվում որենքի մեջ հատուկ ծանոթութեան ավելացնել 23-րդ հոդվածին, վորն ասում է.

«... Իսկական զինվորական ծառայութեան կանչվողները առողջութեան վիճակը և ֆիզիկական պիտանիութեանը վորոշելիս՝ դեպի գործն անբարեխիղճ կամ աչառու վերաբերմունք թույլ տալու համար հանձնաժողովի անդամ-բժիշկները, ինչպես նաև զորակոչիչներին բժշկական քննութեան յենթարկելուն մասնակից զարձրած բժիշկները քրեական պատասխանատվութեան են կրում»:

ԻՍԿԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆ-
ՉԵԼՈՒ ՏԱՐԿԵՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Ըստ գոյություն
ունեցող որենքի, միջնակարգ դպրոցների աշակերտ-
ներին դպրոցն ավարտելու համար տարկետում է
տրվում մինչև 25 տարեկան, իսկ ուսանողներին՝ մին-
չև 28 տարեկան հասակը: Միջնակարգ դպրոցը յերե-
տասարդներն ավարտում են ուժորարար 18 տարեկան
հասակում: Այդ հասակն ել հենց նոր որենքով սահ-
մանվում է միջնակարգ դպրոցն ավարտածներին զին-
վորական ծառայության կանչելու համար: Այսպիսով,
միջնակարգ դպրոցն ավարտածները պետք է հենց նույն
տարին մտնեն զինվորական ծառայության, վորովհե-
տե բուհ ընդունվելու համար վոչ մի տարկետում չի
տրվի: Տարկետում կտրվի միայն միջնակարգ դպրոցն
ավարտելու համար, յեթե զորակոչվողը հիվանդու-
թյան կամ այլ հարգելի պատճառներով չկարողանա
միջնակարգ դպրոցն ավարտել մինչև 18 տարեկան
հասակը: Այդ դեպքում նրան տարկետում կտրվի
դպրոցն ավարտելու համար, բայց վոչ ավելի քան
մինչև 20 տարեկան հասակը:

Վորովհետև ըստ նոր որենքի միջնակարգ դպրոցն
ավարտածները պետք է սկզբում անցնեն իսկական զին-
վորական ծառայությունը և դրանից հետո միայն դնան
բուհեր, այս բարձրագույն ուսումնական հաստատու-
թյունների ուսանողներին տարկետում տալու հարցն
ինքնըստինքյան վերանում է: Ներկայումս բուհերում
սովորող ուսանողների վերաբերմամբ տարկետումը
պահպանվում է նախկին հիմունքներով:

18 տարեկան հասակի յերիտասարդներին միջնա-

կարգ ուսումնական հաստատությունն ավարտելուց
անմիջականորեն հետո Բանակ կանչելը բարեփոխն և
նախատրամին կտա խորհրդային ինտելիգենցիայի մեծ
ներհոսում:

1939 թվին մենք զորակոչի յենք յենթարկում միջ-
նակարգ դպրոցն ավարտած մոտավորապես 145 հազար
մարդ: Այստեղ մտնում են նաև տարբեր ժամանակներ
տարկետում ստացածները: Դա մի կարգին ջոկատ է,
վորից կկոմպլեկտավորվեն վոչ միայն գնդային դա-
րոցները, այլ և հատուկ զորամասերը: Այդ կոնտին-
գենաններից ել հենց կպատրաստվի պահեստի միջին
պետկազմը (կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ,
զինվորական տեխնիկներ և այլն) պատերազմի ժամա-
նակվա համար:

4360
39

Միջնակարգ դպրոցն ավարտած անձերին իսկական
զինվորական ծառայության կանչելու այն կարգը, վոր
սահմանվում է նոր որենքով, մի միջոց է, վորն այլ
կերպ չի կարելի անվանել, քան արդարությունը վե-
րականդնելու միջոց: Յեվ իսկապես, ի՞նչ դրություն
եր մինչև այժմ: Միջնակարգ դպրոցում սովորող մար-
դիկ կարող եյին այնտեղ նստել մինչև 25 տարեկան,
իսկ ուսանողները՝ մինչև 28 տարեկան հասակը: Յեվ
հիշյալ տարիքին հասնելուց հետո միայն, այսինքն՝
իրև կանոն, արդեն ծանրաբեռնված լինելով սեփա-
կան ընտանիքով ու տարիքով, ուսանողները կամ բուհ
ավարտած քաղաքացիները զալիս եյին հավաքակայան:
Ըստ որենքի այդ բոլոր անձերը բանակում ծառայում
եյին մեկ տարի և կոչվում եյին միամյաներ: Բանակի-
ն շարքերում շա՞տ ուներ արդյոք այդ կոնտին-
գենտից: Վո՛չ, շատ քիչ: Բուհեր ավարտածներն իրենց
զգալի մասով տեղավորվում եյին դանազան կարևոր ու



վող-կարեւոր հիմնարկներում, վորտեղ հաճախ կարողանում եյին ձեռք բերել նոր տարկետումներ, ընդհուպ մինչև 30 տարեկան հասակը, յերբ առհասարակ ազատվում եյին գորակոչից: Դուրս եր գալիս այնպես, վոր պետութունը միջոցներ եր ծախսում այդ քաղաքացիների ուսուցման վրա, իսկ նրանք չեյին կատարում նույնիսկ իրենց քաղաքացիական սլարտը պետութեան հանդէպ, չեյին գնում Կարմիր Բանակ:

Մինչդեռ մեր բանակի և նրա տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ ինտելիգենտ մարդիկ բանակին հարկավոր են հսկայական թիվով: Որինազիծը, ընդառաջ գնալով Կարմիր Բանակին և Ռազմա-Մովսիսին Նալա-տորմին, վերացնում ե մինչև այժմ գոյութուն ունեցող այդ անարդարութունը մյուս յերիտասարդների վերաբերմամբ և բավարարում ե սլաշտպանութեան պահանջը:

ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ԸՍՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: Գործող որենքի համաձայն այն գորակոչիկին, վորն իր աշխատանքով պահում ե ընտանիքի մեկ կամ միքանի անաշխատունակ անդամներ, կարող ե արտոնութուն տրվել ըստ ընտանեկան դրութեան: Այդպիսի գորակոչիկը չի ընդունվում կադրայինների շարքը, այլ հաշվվում ե արտագորային, այսինքն՝ փաստորեն ազատվում ե իսկական զինվորական ծառայութունից և գտնվում ե պահեստի հաշվառման մեջ:

Գործող որենքի մեջ ընտանիք ասելով հասկացվում ե, ինչպես վոր այդ տառացիորեն ասված ե, «զանազան աստիճանի ազգակցութեան այն անձերի ազգակցական-աշխատանքային միավորումը, վորոնք ապրում են

միասին և վարում են մի անտեսութուն, կամ թե ապրում են ընդհանուր միջոցներով»:

«Ընտանիքի» այսպիսի, թող թույլ տրվի ասել, սահմանման տակ ընկնում են գորակոչիկի վոչ միայն ծնողները, կինն ու յերեխաները, այլև նրա յեղբայրները, քույրերը, պապը, տատը և նույնիսկ գորակոչվողի կնոջ ծնողները, յեղբայրները, քույրերը, տատն ու պապը և գորակոչվողի ու նրա կնոջ մյուս բոլոր ազգականները, հայտնի չե թե մինչև վոր պորտը (ծրծաղ), յեթե նրանք ապրել են միասին և ստացել են գորակոչվողի ոգնութունը: Ընտանիքի այսպիսի հասկացողութունը՝ ըստ ընտանեկան դրութեան ունենալիք արտոնութեան իրավունքը վորոշելու համար, ներկայումս բացի ծրծաղից ուրիշ վոչինչ առաջացնել չի կարող:

Հարկավոր ե նկատի ունենալ, վոր մինչև 1936 թիվը բանակ կանչվում եյին 21-ից մինչև 23 տարեկան անձերը, շատ գորակոչիկներ ունենում եյին յերկուական, իսկ վոմանք հնարք եյին գտնում ունենալու նույնիսկ յերեքական յերեխա (ծրծաղ), բացի նրանց ինամքին գտնվող այլ ազգականներից: Այդպիսի պայմաններում ընտանիքում միակ աշխատող հանդիսացող անձերին տրվող արտոնութուններն արդարացվում եյին բացառիկ սլայմաններով:

Ըստ որինազժի՝ գորակոչային հասակը, ինչպես յես արդեն ստացի, իլեցվում ե մինչև 18—19 տարվան: Զորակոչիկներին ճշող մասսան, իսկ յես կուղեւնայի հույս ունենալ, վոր բոլոր գորակոչիկները՝ հարյուր տոկոսով, այժմ չեն ունենա սեփական ընտանիք: (Ծրծաղ): Այս՝ առաջին ու կարեւոր հանգամանքն

է, իսկ ե՛լ ավելի լուրջ հանգամանք ե հանդիսանում
այն, վոր կոլտնտեսային կարգի հաղթանակով և մեր
յերկրում գործադրութեան բացակայութեամբ խիստ
կերպով փոխվել և աշխատավորների բարեկեցու-
թյունը, իսկ ընտանիքն ինքն այժմ նման չե նրան,
ինչ վոր առաջ եր, և համենայն դեպս նման չե այն
ծիժազաչարժ սահմանմանը, վոր մեր որենքի մեջ դըժ-
բախտաբար տեղ ուներ:

Ուստի որինազիծը նախատեսում ե, վոր ըստ ըն-
տանեկան դրութեան արտոնություններ տրվում են մի-
այն այն գորակոչիկներին, վորոնք միակ աշխատողն
են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են ըն-
տանիքի յերկու անաշխատունակ անդամներ: Ըստվո-
րում, ընտանիքի անաշխատունակ անդամներ համար-
վում են՝ հայրը—60 տարեկանից բարձր և մայրը՝ 55
տարեկանից բարձր, կամ հայրը և մայրը, յեթե նրանք
1-ին և 2-րդ խմբին պատկանող հաշմանդամներ են,
անկախ հասակից:

Ըստ ընտանեկան դրութեան տրվող արտոնությունը
ներանումն ե կայանում, վոր գորակոչիկն ազատվում ե
իսկական զինվորական ծառայությունից՝ խողաղ ժա-
մանակ, հաշվառման յենթարկվելով վորպես յերկրորդ
կատեգորիայի պահեստային:

**ՇԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ
ՊԱՀԵՍՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:** Զինվորական ուսուցում
ստացած պահեստայինների ընդհանուր կոնտինգենտի
հետագա ավելացման համար զինվորական հաշվառման
մեջ գտնվելու ժամկետն ավելացվում ե տասը տա-
րով—ըստ գործող որենքի յեղած 40 տարեկանից՝ մին-
չև 50 տարեկանը՝ ըստ նախագծի (հոդվ. 32):

Պահեստի տասը ավազ հասակները (40—50 տարե-
կան) պատերազմի ժամանակ կողտազորովեն զլիսավո-
րապես թիկունքային ծառայութեան համար:

Ի տարբերություն գործող որենքից, վորի համա-
ձայն պահեստային են հաշվվում բոլոր նրանք, ոյքեր
անցել են իսկական զինվորական ծառայությունը, և
այսպես կոչված՝ արտազորայինները, վորոնք չեն ան-
ցել իսկական ծառայությունը,—որինազիծը պահես-
տայիններին բաժանում ե յերկու կատեգորիայի
(հոդվ. 31):

1-ին կատեգորիայի պահեստային կհաշվվեն այն
բոլոր զինվորական ծառայողները, վորոնք իսկական
ծառայություն են անցել բանակում, այսինքն՝ միան-
գամայն ուսուցված մարդիկ, իսկ 2-րդ կատեգորիայի
պահեստային՝ այն բոլոր անձերը, վորոնք բանակում
չեն ծառայել, այսինքն՝ գորակոչային կոնտինգենտի
հավելուրդները, յեթե այդպիսիք կլինեն, արտոնու-
թյունից ոգտվողները և այն գորակոչիկները, վորոնք
պիտանի յեն ճանաչվել պատերազմի ժամանակ արտա-
չարային ծառայութեան համար:

2-րդ կատեգորիայի պահեստայինների մեջ կհաշվ-
վեն նաև այն կանայք, վորոնք ունեն բժշկական, անաս-
նաբուժական կամ տեխնիկական պատրաստություն և
զինվորական հաշվառման են վերցված Պաշտպանու-
թյան ու Ռազմա-Մովային Նավատորմի ժողովմանե-
րի կողմից:

Պատերազմի ժամանակ որինազիծը նախատեսում
ե, հարկ յեղած դեպքում, բանակ և նավատորմ կանչել
հիշյալ մասնազինությունների կանանց:

Այդ տեսակետից որինադիծը գործող սրենքից տարբերվում է նրանով, վոր նախատեսում է մասնազետ կանանց պարտականութիւնը՝ վոչ միայն պատերազմի ժամանակ բանակում ծառայելու, այլև անցնելու սահմանված վարժական հասկանքները (ղինվորական հիվանդանոցներին, ինստիտուտներին, լաբորատորիաներին, արհեստանոցներին և այլնին կից), նայած պահանջին և հիշյալ ժողկոմատների կողմից նախապես նշված պլաններին:

Ռազմական տեսակետից սովորեցված կոնտինգենտների գատումը չսովորեցված կոնտինգենտներից, այսինքն՝ պահեստայինների բաժանումը յերկու կատեգորիայի, կապահովի զինապարտների այդ յերկու վոչհավասարաբաժնեք խմբերի ավելի ճիշտ հաշվառումը և համապատասխան զինվորական պատրաստութիւնը խաղաղ ժամանակ, իսկ մորելիկացիայի դեպքում կհնչտացնի բանակի և նախատորմի ճիշտ կոմպլեկտավորումը:

Որինադիծը նախատեսում է վարժական հասկանքների ժամկետի գլխալի ավելացում զինապարտների համար:

Հավաքների ընդհանուր ժամկետներն ավելացվում են—պետկազմի համար՝ յերեք անգամ, կրտսեր հրամանատարների համար՝ համարյա հինգ անգամ, շարքայինների համար՝ 3,5 անգամ և 2-րդ կատեգորիայի պահեստայինների համար՝ 2,5 անգամ:

Բայց յեթե պահեստի մեջ գտնվելու ընդհանուր ժամկետը համեմատենք այդ նույն ժամանակի ընթացքում տեղի ունենալիք հավաքների ընդհանուր ժամկետի հետ, ապա կտանանք հետևյալ, ամենևին վոչ սարսափելի պատկերը.

	Պահեստում գտնվելու ընդհանուր ժամկետը	Հավաքները ընդհանուր ժամկետը
Շարքայիններ	29 տարի (21 տարեկանից մինչև 50 տարեկանը)	1 1/2
Կրտսեր հրամանատարներ	28 տարի (22 տարեկանից մինչև 50 տարեկանը)	2 տարի
2-րդ կատեգորիայի պահեստայիններ	31 տարի (19 տարեկանից մինչև 50 տարեկանը)	2 տարի
Պետկազմ	Կրտսեր լեյտնանտները, լեյտնանտները, ավագ լեյտնանտները	25 տարի
	Կապիտանները և մայորները	20 տարի
	Փոխգնդապետները և գնդապետները	15 տարի
	Բրիգադի հրամանատարները և ավելի բարձր	10—5 տարի

Պետկազմի համար միջին 20 տարի

Այն հանդամանքը, վոր գանազան կատեգորիանեք ծառայութիւնն անցնում են վոչհավասարաչափ, բացատրվում է նրանով, վոր նրանք տարբեր ժամանակ

են պաշտօնաթող լինում, և ուրքեր ավելի շուտ զնան, պետք է անցնեն յերեք տարի, վորովհետև նրանք գլխաւորում են, իսկն ասած, այն մակարդակի վրա, վորի վրա կանգ են առել բանակում, և մյուսները ծառայութեան սանդուղքով բարձրանալով վեր, պետք է անցնեն նույն այդ յերեք տարին, վորովհետև նրանց պարտաւանութեանները բանակում զգալիորեն ավելի պատասխանատու յեն ու ավելի բարդ:

Որինադէի մեջ մատնանշվում է հալաքի միայն առաջնադասն տեղովութունը, իսկ նրանց փաստացի տեղովութունը կարող է սահմանվել ամեն տարի՝ Միութեան ժողովորհի կողմից, նայած ոեալ պահանջին:

Վերապատրաստման հալաքների ընդհանուր ժամկետի ավելացումը, նպատակ ունենալով վորոշակի մակարդակի վրա պահպանել զինապարտների զինվորական վորակավորումը, հանդիսանում է ծայրահեղորեն անհրաժեշտ միջոցառում: Յես արդեն ասացի, վոր ժամանակակից բանակը պահանջում է ամբողջ զինվորական անձնակազմի, այդ թվում նաև շարքային անձնակազմի մեծ վորակավորում: Մինչդեռ, վորքան ելլավ լինի պատրաստված մարտիկը կամ հրամանատարը, ժամանակի ընթացքում նրա վորակավորումը իջնում է: Ուստի պատերազմի դեպքում բանակի լիարյուն և վորակյալ ծավալումն ապահովելու համար, անհրաժեշտ է 1-ին և 2-րդ կատեգորիայի ամբողջ պահեստայիններին պարբերաբար ու հիմնավորապես վարժեցնել:

Յարական բանակի փորձը համաշխարհային պատերազմի ժամանակ, վորտեղ այսպես կոչված՝ աշխար-

հազորը չափազանց թույլեր կամ բնավ վարժված չեր, ցույց ավելց, վոր պատերազմի ժամանակ հաղթեալ պատրաստելը քիչ էֆեկտ եր ապիս. ճակատ ելին ուղարկվում բոլորովին անպատրաստ մարդիկ, իսկ թե դա ինչով վերջացավ, դուք բոլորը հիանալի գիտեք:

ՊԵՏԿԱՆՍԻ ՄԱՍԻՆ: Մտաայութեան գծով պետական կազմի կազերեն ավելի ճիշտ ու ժամանակին առաջաչելու, ինչպես նաև պատերազմի ժամանակվա համար պահեստայինների կուտակումն ավելացնելու նպատակով, նրա իսկական ծառայութեան ժամկետներն զգալիորեն իջեցվում են: Ըստ գործող որենքի, լեյտենանտների և նրանց հավասարեցվածների համար իսկական ծառայութեան ժամկետ սահմանված է մինչև 40 տարեկանը, որինադէով նախատեսվում է մինչև 30 տարեկանը:

Այլազ լեյտենանտների և նրանց հավասարեցվածների համար 40 տարեկանը կդառնա 35 տարեկան, մայորների և նրանց հավասարեցվածների համար—45 տարեկան, ըստ որինադէի՝ 40 տարեկան:

Մնացած ամբողջ պետական կազմի համար՝ գնդապետից սկսած ու ավելի բարձր, ըստ գործող որենքի—60 տարեկան, իսկ ըստ որինադէի գնդապետները 45, բրիգադի հրամանատարները—55, դիվիզիայի հրամանատարները և ավելի բարձր—60 տարեկան:

Որինադէի սահմանում է նոր զինվորական կոչումներ, վորոնք կարգերի մեր ցուցակի մեջ չկային, —իտիզիդապետ և զուամարտակային ավազ կոմիսար: Այս միջոցառումը բղիտում է ծառայական կարգի մի ամբողջ շարք նկատառումներից:

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՊՍՀ-
ՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՈՐԱՊԱՀԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Գործող
որենքի համաձայն (Ձինվորական ծառայողների ար-
տանությունների Որենագրքի 45 և 46-րդ հոդվածներ)
վարժական հավաքների ժամանակ ըստ աշխատանքի
տեղի լրիվ պահպանվում է բանվոր ու ծառայող պա-
հեստայինների միջին աշխատավարձը, իսկ արտադու-
րայինների (խկական գինվորական ծառայություն
չանցածների) միջին աշխատավարձի ² ₃-ը:

Որինազմի համաձայն (հոդվ. 48), ըստ աշխատան-
քի տեղի պահպանվում է բանվոր ու ծառայող բոլոր
գինապարտների, ինչպես շարքային կազմի, այնպես և
պահեստի հրամանատարների, միջին աշխատավարձի
կեսը: Բացի դրանից, որինազմով նախատեսվում է,
վոր պահեստի բոլոր հրամանատարները հավաքի ժա-
մանակվա ընթացքում և հավաքի գնալու ու վերա-
դառնալու ճանապարհի ժամանակվա ընթացքում կըս-
տանան սրական 5-ից մինչև 15 ոտբլի, նախած կոչ-
մանը:

Գործող որենքի համաձայն, շարքային կազմի կոլ-
անտեսական պահեստայինները, կրտսեր հրամանա-
տարները և արտադուրայինները հավաքների ժամանակ
վոչինչ չեն ստանում: Պահեստի կորստեսական հրա-
մանատարները միայն, այսինքն՝ հավաքների կանչվող
կորստեսականների աննշան մասը, Պաշտպանության և
Ռազմա-Մովային Նախտորմի Ժողկոմատներից ստա-
նում է որպաահիկ: Այսպիսի կարգը գինապարտ կոլ-
անտեսականներին դնում է բանվորների ու ծառայող-
ների համեմատությամբ վատ դրության մեջ:

Ուստի որինազմը նախատեսում է այնպիսի կարգ,

վորի ժամանակ այն բոլոր կորստեսականներին, ինչ-
պես պահեստի շարքայիններին, այնպես էլ հրամանա-
տարներին, վորոնք կանչվել են վարժական հավաքնե-
րի, կորստեսությունը պետք է վճարի աշխորերի այն
միջին քանակության կեսը, վոր հավաքի ժամանակվա
ընթացքում կտանան զորակոչվածի հետ միևնույն
մասնագրտությունն ու վորակալորումն ունեցող մյուս
կորստեսականները:

Կորստեսությունների ներգրավումը ժամանակա-
վորապես վարժական հավաքների կանչված գինապարտ
կորստեսականներին նյութական ապահովման դարձին՝
և՛ ժամանակին, և՛ արդարացի միջոցառում է: Ներկա-
յումս էլ մեծ թվով լավ կորստեսություններ աշխորեր
են տալիս կորստեսության գինապարտ անդամներին
այն ժամանակամիջոցի համար, յերը նրանք գտնվում
են վարժական հավաքներում: Որինազմը, այդպիսով,
միայն առաջարկում է ձեռնկերպել այն, ինչ շատ կոլ-
տեսություններ արդեն անում են:

ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ: Որինազմի
6-րդ գլուխը, վորը նվիրված է գինվորական հաշվառ-
մանը, որենագրական կարգով ամրապնդում է հաշվառ-
ման նոր սխտեմը, վորին մենք արդեն անցել ենք այս
տարվանից:

Ըստ ձեռնարկությունների կատարվող հաշվառման
նախկին սխտեմն իրեն շարդարացրեց: Ձեռնարկու-
թյուններում յեղած գինհաշվառման սեղանները վատ
էլին աշխատում:

Հաճախ այնպես էր ստացվում, վոր պահեստում
գտնվող վորոչ գինապարտներ հաշվառման էլին յեն-
թարկվում միքանի ձեռնարկություններում, այդ վե-
րաբերում է գլխավորապես նրանց, ում մենք իր ժա-

մանակին անվանում ելինք՝ չվոգներ, իսկ վոմանք ել ամենեկին չեցին հաշիբ առնելում, վորքի հետևանքով հաշվառման տեղեկութունների մեջ խառնաշփոթութուն եր ստեղծվում:

Չփասպարտների հաշվառման նոր սխտեմը՝ ըստ բնակավայրի հատկանիշի—ըստ միլիցիայի բաժանմունքների և գյուղական խորհուրդներին, իր գոյության կարճ ժամանակից ընթացքում արդեն տվել և դրական արդյունքներ: Հաշվառման նոր սխտեմի ժամանակ, յերբ զինվորական հաշվառման ընդունելը և հաշվառումից հանելը կատարվում և տնային գրքույկում գրանցելու և զուրս գրելու հետ միաժամանակ, պահեստի զինապարտի համար փաստորեն անհնարին և դառնում հաշվառման յենթարկվելու իր պարտականութունը մոտանալը: Բացի այդ, հաշվառման նոր սխտեմը շատ ավելի հարմար և զինապարտի համար: Գալով մի ուրիշ քաղաք կամ միլիցիայի այլ բաժանմունքի շրջան՝ միևնույն քաղաքում, զինապարտը չպետք և անձամբ միլիցիա ներկայանա զինվորական հաշվառման ընդունվելու համար: Դրա համար բավական և, վոր նա անձնագրի հետ միասին տնային վարչությանը հանձնի իր զինվորական գրքույկը:

Յեթե յուրաքանչյուր զինապարտ ճշգրտորեն պահպանի որինագծում 63, 64, 65 և 66-րդ հոդվածներով նախատեսված կանոնները, իսկ տնային վարչությունները, միլիցիան և գյուղխորհուրդները խստորեն հետևեն այդ բանին, իսկ նրանք պարտավոր են գրառվել զրանով, գիտակցելով այդ գործի համար ունեցած ամբողջ պատասխանատվությունը, ապա զինվորական հաշվառումը մեղանում կազմակերպված կլինի հիանալի, և հաշվառման տեղեկությունները, վորոնց ճշտու-

թյունը հսկայական նշանակութուն ունի պատերազմի ժամանակ զինված ուժերի հաջող մորթիլիզացիայի ու նորմալ կոմպլեկտավորման համար,—կարտացոլեն պահեստի կոնտինդենտների իսկական վիճակը:

ՏԱՐԲԱԿԱՆ ՅԵՎ ՆԱԽԱՉՈՐԱԿԱՆ ՉԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: Ըստ գործող որենքի, նախադրակոչային պատրաստությամբ ընդգրկված են յերկու հասակ՝ 18—19 տարեկան յերիտասարդները: Այդ պատրաստությունն իրականացվում և վարժական հավաքներում, յերկու ուսումնական ամիս ընդհանուր տեսողությամբ:

Որինագիծը մտցնում և յերիտասարդության զինվորական պատրաստության նոր ձև—տարրական զինվորական պատրաստություն, վորը կկիրառվի բոլոր վոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցներում, սկսած 5-րդ դասարանից մինչև 7-րդ դասարանը ներառյալ: Դեռահասաների այդ տարրական պատրաստությունից բացի, կկիրառվի նաև նախադրակոչային պատրաստություն: Վերջինս կվերաբերի միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների աշակերտներին (8, 9 և 10-րդ դասարաններին):

Չսոժորող յերիտասարդությունը նախադրակոչային պատրաստություն, իրրև ուսուցման պարտադիր տեսակ, չի անցնի, վորովհետև փորձը ցույց և տվել, վոր այդպիսի պատրաստությունը պահանջում և մեծ միջոցներ և քիչ ոգուա և բերում:

Տարրական զինվորական պատրաստության համար դպրոցների ուսումնական պլանի մեջ յենթադրվում և հատկացնել վեցորյակում յերկուական ժամ, իսկ նախադրակոչային պատրաստությունն ուսումնական հաստատություններում կկիրառվի հատուկ ծրագրով:

Ինչպես տարրական, այնպես և նախադորակոչային պատրաստութիւնն ուսումնական հաստատութիւնններում կիրառելի հաստիքային գինւորական ղեկավարներին միջոցով, գերազանցապես պահեստի հրամանատարներին կազմից:

Ճիշտ կազմակերպված տարրական և նախադորակոչային պատրաստութիւնը մեր յերկրի պաշտպանութեան համար կիսադա այնպիսի դեր, վորին նշանակութիւնը դժվար և գերադնահատել: Մեր ապագա մարտիկները հնարավորութիւն կտանան ծանոթանալու մեր Կարմիր Բանակի մարտական արդիցիաներին և գինւորական կարգապահութեան հիմնական սկզբունքներին: Գեղահասակները և սրտանինները կսովորեն ղինւորական շարափարթութիւնը, հրաձգային դործը, կգիտենան հակադային ու հակաբրիտանական պաշտպանութեան կանոնները և, վոր դիւստիւորն և, կստանան Ֆիզիկական լավ վարժվածութիւն ու կօրվածք:

Աճող սերունդը տարրական գինւորական պատրաստութեան միջոցով կստանա այն բարոյական ու Ֆիզիկական հատկութիւնները, վորոնք Կարմիր Բանակի մարտիկին անհրաժեշտ են սոցիալիզմի և մեր հայրենիքի համար մղելիք ապագա մարտերում:

Յեւ, վերջապես, յես պետք է նշեմ, վոր պարտադիր գինւորական ծառայութեան գործող որենքը սահմանում և «կրօնական համոզմունքների պատճառով գինւորական ծառայութիւնից ազատելու» հատուկ կարգ:

Ինչպես ցույց է տվել վերջին տարիների գորակոչերի փորձը, կրօնական համոզմունքների պատճառով գինւորական ծառայութիւնից ազատվողների թիւն այնքան աննշան և (տառացիորեն միավորներ ամբողջ

Միւլթիյան մեջ), վոր նոր որենքի մեջ աշխատի հասված մտցնելու վորեւ անհրաժեշտութիւն չկա արդեն: 1937—1938 թ. թ. գորակոչերի ժամանակ կրօնական համոզմունքների պատճառով գինւորական ծառայութիւնից ազատվելու մասին չէր ստացվել վոր մի դեմում:

Ընկե՛ր դեպուտատներ:

Յեզրափակման մեջ յես ուզում եմ ասել, վոր «Ընդհանուր գինւորական պարտականութեան» նոր որենքը, վորը, հուսով եմ, կընդունի ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը, կհանդիսանա այն ամուր հիմքը, վորի վրա Կարմիր Բանակը և Ռազմա-Մովային Նավատորմը կծափարկեն ե՛լ ավելի լայնորեն ու կզառնան ե՛լ ավելի հզոր, ե՛լ ավելի ամուր:

Խորհրդային Միւլթիյան գինված ուժերը միշտ ել հանդիսացել են իրենց ժողովրդի միս ու արյունը և նրա հետ միասին առաջ են շարժվել դժվարութիւնների հաղթահարման ուղիով, նվաճումների ու հաղթանակների ուղիով:

Ինչպես վոր ամբողջ յերկիրը, Կարմիր Բանակն ու Ռազմա-Մովային Նավատորմն իրենց զարգացման բոլոր հոսանքներում՝ և՛ շինարարութեան բոլոր հարցերի, և՛ թշնամու դեմ մղված գինված պայքարի բոլոր հարցերի լուծման ժամանակ, միշտ իրենց առջևում ունեցել են Լենինի—Ստալինի մեծ կուսակցութիւնը և մեր խնամտուն առաջնորդ ընկեր Ստալինին: (Բուռն, յերկարատև ծափահարութիւններ, վորոնք վերածվում են ովացիսի: Բոլորը վորտի յեն կանգնում: Բացակաչութիւններ՝ «Ռուս», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»):

Յեւ այժմ, յերր ամբողջ աշխարհը գտնվում է նախապատերազմական տենդի վիճակում, Կարմիր Բա-

նակը և Ռազմա-Շովային Նախատորմը հպարտ են այն գիտակցութեամբ, վոր Խորհրդային Միութեան ղինված ուժերի հետ միատեղ մեր ամբողջ հիանալի ժողովուրդն ու Կառավարութեանը, Լենինի—Ստալինի կուսակցութեանը և մեր իմաստուն առաջնորդ Ստալինը միշտ և անդադար, հանդիստ և ուժգին աշխատում են, վորպեսզի ամեն մի վայրկյան լինեն մարտական լիակատար պատրաստութեան մեջ: Խորհրդային Միութեանը չեն կարող հանկարծակիի բերել միջազգային իրադարձութեանները, վորքան ել դրանք անակնկալ ու անեղ լինեն: Իսկ այն պարոնները, վորոնց միտքնված բանականութեանը նրանց խանդարում է Խորհրդային Միութեանը տեսնել այնպես, ինչպիսին նա կա իրականում, միշտ կստանան առարկայական դասեր այնքան ժամանակ, մինչև հասկանան, վոր Խորհուրդների մեծ ժողովուրդն ունի և միշտ կունենա իր մեծ ու թշնամու դեմ մղվող պայքարում սարսափելի զինված ուժը, վորը կխորտակի բոլորին ու ամեն ժամանակ, ով վոր համարձակվի ձեռք բարձրացնել հաղթական Խորհրդային Միութեան սըրբազան իրախուճներին, հողի ու պատվի վրա:

Կեցցե՛ք մեր ժողովուրդը և նրա պանծալի կառավարութեանը:

Կեցցե՛ք Լենինի—Ստալինի կուսակցութեանը:

Կեցցե՛ք մեր մեծ Ստալինը:

(**Բուռն** ծափահարութեաններ, վորոնք վերածվում են ովացիայի: «Ուռա» բացականչութեաններ: Բոլորը վոտի յեն կանգնում և ծափահարում են: Լսվում են բացականչութեաններ՝ «Կեցցե՛ք Կարմիր Բանակը և նրա առաջնորդ ընկեր վորդիայը», «Կեցցե՛ք Ռազմա-Շովային Նախատորմը», «Կեցցե՛ք մեծ Ստալինը»):



<< Ազգային գրադարան



NL0217742

40.534

4125 15 4.

О ПРОЕКТЕ ЗАКОНА О ВСЕОБЩЕЙ
ВОЙНСКОЙ ОБЯЗАННОСТИ

Доклад Народного комиссара обороны
СССР маршала Советского Союза
тов. К. Е. Ворошилова

Армгив—Издательство полит. литературы
Ереван, 1939